

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նպատակ	Բիզնես վարկ շրջանառու, հիմնական, ինչպես նաև հիմնական և շրջանառու միջոցների ֆինանսավորման համար
Արժույթ	ՀՀ դրամ
Գումար	2 500 000 – 75 000 000
Ժամկետ	12 – 60 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք¹	12,4%
Տարեկան փաստացի տոկոսադրույք¹	13,13%
Սպասարկման [ամենամսյա] վճար	0%
Տրամադրման [միանվագ] վճար	0%
Տրամադրման եղանակ	Կանխիկ, անկանխիկ

ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐՎԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- ՀՀ ռեզիդենտ հանդիսացող այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր (այսուհետև՝ Ա/Ձ), որոնք համապատասխանում են «ՓՄՁ պետական աջակցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ՓՄՁ սուբյեկտներ»-ի համար սահմանված առավելագույն սահմանաչափերին:
- Ա/Ձ-ի դեպքում տարիքը՝ 21 և ավելի: Ընդ որում՝ դիմելու պահին տարիքի և ակնկալվող վարկի ժամկետի գումարը չպետք է գերազանցի 70-ը վարկի ամբողջ ժամկետի ընթացքում:
- Բնակություն և առնվազն 6 ամսվա անընդմեջ բիզնես գործունեություն ՖԻՆԲԱ-ի սպասարկման տարածքում: Սույն պահանջը չի տարածվում սկսնակ բիզնեսի վրա, որի ֆինանսավորվող նախագծի ընդհանուր արժեքը չի գերազանցում 5,0 մլն. ՀՀ դրամը: Այդ դեպքում վարկերը կարող են տրամադրվել ապագա կանխիկ հոսքերի վերլուծության և/կամ այլ պարբերական եկամուտների (օրինակ՝ ամսական աշխատավարձ) հիման վրա:
- Վարկի ծախսածածկման գործակից (հաճախորդի ազատ միջոցներ հարաբերած դիտարկվող վարկի ամսական մարում)՝ նվազագույնը 1.5³
- Կապիտալի համարժեքության գործակից (կապիտալ հարաբերած ակտիվների և դիտարկվող վարկի հանրագումարին)՝ նվազագույնը 0.4³
- Համապատասխանություն ՖԻՆԲԱ-ի սոցիալական և բնապահպանական ստանդարտներին:
- Վարկառուն պիտի գործի իր անունից և իր օգտին. արգելվում է վարկ վերցնել հօգուտ երրորդ անձի:

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ⁴

<ul style="list-style-type: none"> • Վարկարժանության գնահատական • Կայուն եկամտի աղբյուր 	2 500 000 – 5 000 000 ՀՀ դրամ	5 000 001 – 75 000 000 ՀՀ դրամ
Երկու երաշխավոր⁵ Կամ մեկ երաշխավոր⁵ և լիկվիդային գույքի գրավ ⁶ առնվազն վարկի գումարի 50% չափով		Մեկ երաշխավոր ⁵ և լիկվիդային գույքի գրավ ⁶ , ընդ որում՝ <ul style="list-style-type: none"> • անշարժ գույքի դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը՝ գնահատված արժեքի մինչև 80% • տրանսպորտային միջոցի դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը՝ գնահատված արժեքի մինչև 60% • գյուղատնտեսական տեխնիկայի դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը՝ գնահատված արժեքի մինչև 70% • շրջանառու միջոցներ հանդիսացող ապրանքանյութական պաշարների գնահատված արժեքի մինչև 50% • այլ գրավների դեպքում գնահատված արժեքի մինչև 50%

ՎԱՐԿԻ ՍԱՐՈՒՄ

Վարկը մարվում է մայր գումարից, տոկոսագումարից և սպասարկման վճարից (առկայության դեպքում) կազմված ամենամսյա հավասարաչափ մարումներով կամ ձկուն գրաֆիկով⁷:

Արտոնյալ ժամկետ⁸ մինչև 9 ամիս:

Վարկառուն առանց տուժանք վճարելու կարող է վաղաժամկետ՝ ամբողջովին կամ մասնակիորեն, մարել վարկը: Վաղաժամկետ մարման դեպքում մայր գումարի հետ միասին, համամասնորեն նվազեցվում է վարկառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսը (տոկոսագումարներ, այլ վճարներ), բացի այն դեպքերից, երբ վճարողն այլ գրավոր հանձնարարական է տալիս: Չեն նվազեցվում ՀՀ օրենքով և պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարվող տուժանքներն ու այլ վճարները, և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված վճարները: Վարկն ամբողջությամբ վաղաժամկետ մարելիս վարկառուն վճարում է տվյալ օրվա դրությամբ հաշվարկված սպասարկման և այլ վճարները, տոկոսագումարները, մայր գումարը:

Ապագա ամիսների վճարումները կարելի է կատարել նախօրոք՝ ներկայացնելով գրավոր հանձնարարական: Ապագա յուրաքանչյուր ամսվա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ. 1) սպասարկման և այլ վճարներ, 2) տոկոսագումար, 3) մայր գումար:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՈՒՂԱՆՔՆԵՐ

- Վարկառուի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում ՖԻՆԲԱ-ն կարող է պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններով նախատեսված կարգով փոփոխել վարկի տոկոսադրույքը:
- Սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել **ՏՈՒՇԱՆՔ**՝ 1) ժամկետանց մայր գումարի **0,13%-ի** չափով, 2) ժամկետանց տոկոսագումարի **0,13%-ի** չափով:
- Մայր գումարի մարման ժամկետի խախտման դեպքում ժամկետանց գումարի նկատմամբ պայմանագրով նախատեսված տոկոսադրույքի կիրառումը դադարեցվում է և խախտման օրվանից մինչև վարկի մարման օրը կիրառվում է տարեկան **24% տոկոսադրույք**: Եթե վճարվող գումարը բավարար չէ ժամկետանց բոլոր պարտավորությունների կատարման համար, նախ մարվում են վարկատուի այն ծախսերը, որ ուղղված են եղել վճարման ենթակա գումարների ստացմանը, այնուհետև՝ սպասարկման վճարները, տուժանքները, տոկոսագումարները և մայր գումարը: Այս հերթականությունը կարող է փոխվել վարկատուի որոշմամբ՝ վարկառուի գրավոր դիմումի հիման վրա:
- **Պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու դեպքում այդ տեղեկությունն ուղարկվում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է ձեռ վարկային պատմությունը:** Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ ապագայում՝ նոր վարկի համար դիմելիս:
- **Պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում ձեռ գույքը կարող է բռնագանձվել օրենքով սահմանված կարգով:**

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տրամադրում տրանշերով⁹ (մաս-մաս)	Առավելագույնը 5 տրանշ, ընդ որում մեկ տրանշի գումարը չի կարող պակաս լինել 1 000 000 ՀՀ դրամից:
Վարկի պայմանների փոփոխում	ՀՀ Կենտրոնական բանկի կողմից վարկի վերաֆինանսավորման մերժման կամ վերաֆինանսավորելուց հետո վարկի հետ կանչման վերաբերյալ ծանուցման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրված վարկի վերաֆինանսավորման նպատակով ստորագրվում է նոր վարկային պայմանագիր տվյալ պահին սահմանված բիզնես դրամային վարկերի համար սահմանված պայմաններով: Իսկ նախատեսված ժամկետում նոր վարկային պայմանագիր չստորագրելու դեպքում գործող պայմանագրով նախատեսված տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 14,9% , ինչպես նաև սահմանվում է վարկի ամսական սպասարկման վճար, փոփոխության կատարման դրությամբ վարկի մնացորդի 0,90% չափով: Մինչև փոփոխված ժամանակացույցը գործողության մեջ մտնելը կատարված վաղաժամկետ վճարումների մասով վերահաշվարկ չի կատարվում:

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Պահանջվող փաստաթղթեր (ներկայացվում են առձեռն)	Անհատ ձեռնարկատեր <ul style="list-style-type: none"> Վարկառուի և երաշխավորների նույնականացման քարտերը կամ վերջիններիս անձնագրերը և սոցիալական քարտերը Պետական գրանցման վկայականը Այլ փաստաթղթեր՝ ըստ պահանջի 	Իրավաբանական անձ <ul style="list-style-type: none"> Պետական գրանցման վկայականը, տնօրենի ներդիրը Տնօրենի, բաժնետերերի և երաշխավորների նույնականացման քարտերը կամ վերջիններիս անձնագրերը և սոցիալական քարտերը Իրավաբանական անձի մասնակիցների պետական գրանցման վկայականի, կանոնադրության և հարկային կողի պատճենները Այլ փաստաթղթեր՝ ըստ պահանջի
Վարկի տրամադրման որոշման վրա ազդող գործոններ	Դրական գործոններ <ul style="list-style-type: none"> Վարկունակության բավարար մակարդակ Լավ վարկային պատմություն Վարկի մարման աղբյուր հանդիսացող բիզնեսից ստացվող եկամուտ 	Բացասական գործոններ <ul style="list-style-type: none"> Վարկունակության անբավարար մակարդակ Վատ վարկային պատմություն Վարկի ապահովվածության բացակայություն/անբավարար ապահովվածությունը Անհամապատասխանություն վարկառուին ներկայացվող պահանջներին Կեղծ կամ անարժանահավատ տեղեկության տրամադրում Այլ վարկային ռիսկեր
Ժամկետներ	<ul style="list-style-type: none"> Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում՝ առավելագույնը 3 աշխատանքային օր: Դրական որոշման մասին հայտ ներկայացնողին գրավոր կամ բանավոր տեղեկացում՝ առավելագույնը 1 աշխատանքային օր: Բացասական որոշման մասին հայտ ներկայացնողին գրավոր (թղթային կամ էլեկտրոնային) և բանավոր տեղեկացում՝ առավելագույնը 1 աշխատանքային օր: Վարկային կոմիտեի որոշման վավերականության առավելագույն ժամկետ՝ 15 աշխատանքային օր: 	
Այլ	Վարկը կարող է ձևակերպվել ՖԻՆԵԼԱ-ի բոլոր մասնաճյուղերում: Նախքան պայմանագրի կնքումը Դուք կստանաք անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:	

ՆՇՈՒՄՆԵՐ

- Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա՝ վարկի մնացորդից: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժեճա վարկը տոկոսագումարները և վարկի տրամադրման առնչվող բոլոր այլ պարտադիր վճարները սահմանված կարգով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է ստորև:
- Սկսնակ բիզնեսը վերաբերում է այն դեպքերին, երբ պոտենցիալ շահառուն նախորդող 6 ամիսների ընթացքում չունի գործող որևէ այլ բիզնես:
- Կապիտալի համարժեքության և վարկի ծախսածածկման սահմանված գործակիցներից շեղումները հաստատվում են համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի:
- Վարկային կոմիտեն կարող է ներկայացնել հավելյալ ապահովման՝ երաշխավորության կամ գրավի պահանջ:
- Ֆիզիկական անձի երաշխավորը** կարող է լինել **ներքին** ընտանիքի անդամ, և **արտաքին** այլ անձ: **Եթե կա միայն արտաքին երաշխավոր**՝ վարկառուի ընտանիքի անդամը՝ ամուսնացած լինելու դեպքում՝ կինը/ամուսինը, գրանցվում է որպես փոխկապակցված անձ: **Ֆինանսական երաշխավորը** պիտի ունենա վարկի գումարի հետ համադրելի եկամուտ կամ լիկվիդային գույք: **Իրավաբանական անձի դեպքում մասնաբաժին ունեցող անձանց երաշխավորությունը պարտադիր է:**
- Լիկվիդային գույք**՝ պետական գրանցմամբ գյուղատնտեսական տեխնիկա, տրանսպորտային միջոց, անշարժ գույք: Գրավի ապահովագրության կարիք չկա:
- Մարման ձևում գրաֆիկ**՝ գրաֆիկ, որի դեպքում մայր գումարի վճարման չափն ամեն ամիս կարող է տարբեր լինել:
- Արտոնյալ ժամանակաշրջան**՝ ժամանակահատված, որի ընթացքում մայր գումարից մարում չի կատարվում: **Արտոնյալ մարում**՝ միայն տոկոսագումարից և սպասարկման վճարից կազմված մարում:
- Տրանշ**՝ Հաստատվում է ընդհանուր վարկ մեկ վարկային պայմանագրի կնքելով, սակայն տրամադրումը կատարվում է մասնակի, յուրաքանչյուր տրանշի համար նախօրոք հաստատված պայմանների կատարումից հետո: Տրանշերով վարկի հաստատման դեպքում գրավի պայմանագիրը կարող է կնքվել վարկի ամբողջ գումարի չափով, կամ յուրաքանչյուր տրանշի համար առանձին: Ցանկացած տրանշի վերջին մուծման օրը չի կարող ավելի ուշ լինել նախօրոք հաստատված վարկի ժամկետից: Առաջին և վերջին տրանշի միջև տրամադրման առավելագույն ժամկետը՝ 6 ամիս:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏՍՍՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿ

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի հիման վրա.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{365n}}$$

Սույն պայման $A =$

սվել: Մանրամասների համար այցելեք www.finca.am կամ զանգահարեք 012 55 55 55:

որտեղ՝ A – վարկի սկզբնական գումարը n – վարկի մարմանն ուղղված վճարի հերթական համարը N – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի հերթական համարը K _n – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը D _n – վարկի տրամադրման օրից մինչև մարմանն ուղղված n-րդ վճարման օրն ընկած ժամանակահատվածը օրերով i – տարեկան փաստացի տոկոսադրույքը	Վարկի ժամկետ	36 ամիս
	Տարեկան անվանական տոկոսադրույք	11,75%
	Սպասարկման վճար	0%
	Տրամադրման վճար	0%
	Վարկի մարում	3 ամիս արտոնյալ ժամկետ ժամանակահատվածի սկզբից
	Տրամադրման օր	05 մայիսի, 2021թ.
	Առաջին մարման օր	07 հունիսի, 2021թ.
	Տարեկան փաստացի տոկոսադրույք	12,39%

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

- ա) սպառողական վարկերը,
- բ) բնակության համար նախատեսված անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման վարկերը,
- գ) այն վարկերը, որոնք նախատեսված են կառավարության կողմից պետական կարիքների համար օտարման ենթակա հողերի ձեռքբերման համար,
- դ) ոչ մասնավոր Շահառուներին տրամադրված վարկերը (<< ռեզիդենտ մասնավոր սեփականատերերի 50%-ից պակաս մասնաբաժին ունեցող Շահառուներ),
- ե) արժուրային և արժեթղթերի սպեկուլյացիայի հետ կապված վարկերը,
- զ) Շահառուների այլ վարկային պարտավորությունների մարման նպատակով տրամադրված վարկերը,
- է) լոնբարդային վարկերը կամ բոլոր այն վարկերը, որոնք տրամադրված են միայն գրավի հիման վրա (Ենթավարկերը պետք է տրամադրվեն առնվազն նախորդող 6 ամիսների բիզնես գործունեության (գյուղատնտեսության և/կամ այլ ոլորտում) ֆինանսական վերլուծության հիման վրա),
- ը) այն վարկերը, որոնք առնչվում են IFC-ի բացառման ցուցակում նշված գործունեությունների հետ https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/company-resources/ifcexclusionlist
- թ) վերականգնվող վարկային գծերը,

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՈՐ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- ՖԻՆԲԱ-ն իրավունք ունի պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով միակողմանիորեն փոփոխելու վարկի տոկոսադրույքը մինչև «+5» տոկոսային կետով, բայց ոչ ավելի, քան << ԿԲ-ի կողմից սահմանված՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը՝ այս մասին վարկառուին ծանուցելով փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ:
- Վարկային պարտավորությունների վերաբերյալ քաղվածքները տրամադրվում են տեղում, իսկ այլ տեղեկատվությունը առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ դիմումի հիման վրա: Քաղվածքների տրամադրումն անվճար է:
- Դուք կարող եք հաղորդակցվել ՖԻՆԲԱ-ի հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն առավել հարմար է, քանի որ զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից:
- Ֆիզիկական անձանց առաջարկվող վարկատեսակների համեմատության և ամենահարմար տարբերակի ընտրության համար կարող եք այցելել «Ձեր ֆինանսական տեղեկատուն» էլեկտրոնային հարթակը www.fininfo.am հասցեով:
- Որպես վարկային պարտավորության ապահովման միջոց գույք գրավադրելիս առաջանում է երրորդ անձանց կողմից մատուցվող այլ օժանդակ ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն: Նշված ծառայությունների գները և ծառայություն մատուցող կազմակերպությունները ներկայացված են ստորև:

Ծառայություն	Ծառայությունը մատուցող պետական մարմին, համագործակցող կազմակերպություն	Ծառայության վճար
Գրավի պայմանագրի վավերացում	ՀՀ նոտարական գրասենյակներ	3 000 – 20 000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում	ՀՀ կադաստրի կոմիտե	3 000 – 30 000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի միավորի վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրում	ՀՀ կադաստրի կոմիտե	500 – 10 000 ՀՀ դրամ
Գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում	ՀՀ արդարադատության նախարարություն	2 000 ՀՀ դրամ
Տրանսպորտային միջոցի նկատմամբ գրավի իրավունքի գրանցում	ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հաշվառման-քննական ստորաբաժանումներ	2 000 ՀՀ դրամ
Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հաշվառման-քննական ստորաբաժանումներ	3 000 ՀՀ դրամ
Բանկային փոխանցում (ծառայությունների վճարների փոխանցում)	ՀՀ բանկեր	Յուրաքանչյուր փոխանցման համար 300 ՀՀ դրամ
Որպես ապահովման միջոց գրավադրվող անշարժ գույքի գնահատում անկախ գնահատող կազմակերպության կողմից	«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ «Օլիվեր Գրուպ» ՍՊԸ «Ա.Գ. Բորսա» ՍՊԸ «Վի Էմ - Ար Փի» ՍՊԸ «Գարդի» ՍՊԸ «Ֆինլոու» ՍՊԸ	Կախված գույքի տեսակից և մակերեսից, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ

ՆՇՈՒՄ. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ն ՎԵՐԱՀՍՎԿՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: